Հաստատված է
ՀՀ առողջապահության նախարարի
2017թ. մարտի 17-ի N 873-Ա հրամանով

Մանկաբարձ-գինեկոլոգների թեստավորմանը ներկայացվող պահանջներն ու պայմանները

1. Բժշկական հաստատությունների հետ կնքված պետական պատվերի պայմանագրային դրույթներին համապատասխան, բժշկական հաստատության տնօրինությունը պարտավոր է կազմակերպչական աշխատանքներ իրականացնել բուժաշխատողների գիտելիքների ու գործնական հմտությունների գնահատման համար, իսկ նախարարությունն իրավասու է իրականացնելու գիտելիքների ստուգման գործընթաց և գիտելիքների գնահատման արդյունքների հիման վրա տնօրինությանը ներկայացնել հանձնարարականներ:
2. Մանկաբարձ-գինեկոլոգների թեստավորումը իրականացնել Վերատադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտում՝ առանձնացված և տեխնիկապես հագեցված սենյակում, համաձայն ժամանակացույցի:
3. Թեստավորումը անցկացվում է ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով, գիտելիքների գնահատման էլեկտրոնային բազայում մուտքագրված 200 հարցից համակարգչային ծրագրի պատահական ընտրությամբ կազմած 40 հարց պարունակող թեստերի միջոցով:
4. Թեստավորման ենթակա են ծննդօգնության հիվանդանոցային հաստատություններում աշխատող մանկաբարձ-գինեկոլոգները՝ համակարգչային ծրագրի պատահական ընտրությամբ կազմված թեստի հարցերին համակարգիչի միջոցով պատասխանելու եղանակով:
5. Յուրաքանչյուր մասնագետի էլեկտրոնային եղանակով թեստավորման ավարտից հետո, թեստավորման արդյունքը համակարգիչից տպվում է թղթի վրա և վավերացվում թեստավորվողի ստորագրությամբ:
6. Թեստավորման ամփոփ արդյունքները ներկայացվում են ՀՀ առողջապահության նախարարին: